ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳԱԼՍՏՅԱՆ

Ծնվել է 1955թ., Երևանում: Ավարտել է Երևանի Հովի. Հովհաննիսյանի անվան թիվ 52 միջնակարգ դպրոցը: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որակավորումը՝ պատմաբան-ազգագրագետ:

1978թ. աշխատանքի է անցել Հայաստանի պետական ազգագրության թանգարանում՝ որպես ավագ գիտաշխատող:

1983թ. ԽՍՀՄ ԳԱ Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ, ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1988թ. գործուն մասնակցություն է ունեցել Ղարաբաղյան շարժմանը, դարձել է շարժման առաջամարտիկներից մեկը՝ <<Ղարաբաղ>> կոմիտեի անդամ:

1989թ. դեկտեմբերին <<Ղարաբաղ>> կոմիտեի անդամների հետ ձերբակալվել է և վեց ամիս անցկացրել Մոսկվայի Բուտիրյան բանտում: Այստեղ էլ գրել է իր առաջին ժողովածուն՝ <<Չուղարկված նամակները>>: Բանտից ազատվելուց հետո աշխատել է գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող:

1990թ. դեկտեմբերի 4-ին ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր, մինչև 1992թ. դեկտեմբերը Երևանի քաղխորհրդի նախագահն էր, միաժամանակ՝ ՀՀ կառավարության նախագահության անդամը: Չարագործի գնդակից սպանվել է 1994 թվականին:

Եղել է Հայաստանի երրորդ հանրապետության մայրաքաղաքի առաջին քաղաքապետը: